



Ա. Դ. ԶԵԽՈՎ

ԿԱՆԿԱ

ՊԵՏՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1937

Հ

30 MAY 2011

32-A
32069

Ա. Պ. ԶԵԽՈՎ

891.715
—
9-34

Վ Ա Ն Կ Ա

Թարգմ. Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

Նկարներ
Ա. ԴԱՎԻԴՈՎԸ



ՊԵՏՐՈՍ

ՀԱԿԱՑ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ

1937

ՓՈՔՐԱՀԱՍՏԿՆԵՐԻ ՅԵՎ ՄԻԶԱՀԱՍՏԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատ. Խմբագիր՝ Եղ. Զոփուրյան
Տեխ. Խմբագիր՝ Լ. Ահանջյան
Մրգագրից՝ Ռ. Նեսիան

Գլավկոսի լիազոր Կ-4483 հրատ. 3937
Պատվեր 1564, տիրած 3000
Պետհատի տպարան, Յերևան, II Կոռնյանցի, 4



59388-66

Վաճկա ժուկովը, իննը տարեկան մի
տղա, վորին յերեք ամիս առաջ տվել եյին
իբրև աշկերտ կոշկակար Ալյախինի մոտ,
ծննդյան նախրնթաց գիշերը չեր պառկում
քնելու։ Սպասելով, մինչև տանտերերն ու
աշկերտները գնացին յեկեղեցի, նա վերց-
րեց տանտիրոջ պահարանից թանաքով ոլր-
վակը, ժանգոտած գրչածայրով գրչակոթը և
գնելով իր առջև թղթի մի ճմլված թերթ,
սկսեց գրել։


Նախքան առաջին տառը դուրս բերելը,
նա մի քանի անգամ յետ նայեց դեպի գըու-
ներն ու լուսամուտները, թեք նայեց մութ
սրբապատկերին, վորի յերկու կողմը ձգվում
եյին դարակներն իրենց կաղապարներով,
և ընդհատ-ընդհատ հոգոց հանեց։

Թուղթը պառկած եր սեղանի վրա, իսկ նա
ինքը ծունկ եր չոքել նստարանի առջև։

«Ոիրելի պապիկ, Կոնսանտին Մակարիչ, — զրում
եր նա. — Անա զրում եմ ինք նամակ։ Շնորհավոր ծնունդ
յեվ մկրտություն, ցանկանում եմ ինք ամեն ինչ տեր աս-

սրծոց: Յես վոչ հայր ունեմ յեզ վոչ՝ մայր, սիայն դու յեռ
մնացել ինձ:

Վանկան աչքերը դարձրեց մութ լու-
սամուտին, վորի մեջ յերևում եր նրա մո-
մի արտացոլումը, և պարզ պատկերացրեց
իրեն իր պապ կոնստանտին Մակարիչին,
վոր ծառայում եր պարոն Ժիվարյովների
մոտ՝ իբրև գիշերային պահակ: Նա մի
փոքրիկ, լղարիկ, բայց չափազանց շարժուն,
ճարպիկ ծերուկ է, 65 տարեկան, անվերջ ծի-
ծաղող յերեսով և հարբած աչքերով: Յերեկը
նա քնում եր ծառաների խոհանոցում կամ
զվարճախոսում խոհարարուհիների հետ, իսկ
գիշերը, լայնարձակ քուրքի մեջ փաթաթված
ման ե գալիս ազարակի շուրջը և թլ խկ-
թիկացնում թակիչը: Նրա յետեկոց, զլուխնե-
րը կախ զցած, քայլում են պառավ կաշ-
տանկան և շնիկ Վյունը,*) վորին, շնորհիվ
նրա սև զույնի և աքիսի նման յերկար մարմ-
նի, այդպես եյին անվանել: Վյունն ան
սովոր կերպով համեստ ե և սիրալիք, մի-
ևնույն հաճոյանքով նայում ե թե յուրա-
յիններին և թե ստարներին, բայց վատա-
հություն չի վայելում: Նրա համեստության
և խոնարհության տակ թագնված ե իսկական
ճիղվիտական մի նենգություն: Վոչ վոք նը-



Նա ծունկ եր չոքել նստարանի առջև.

*.) Վյուն — բարակ, շարժուն՝ ձուկ:

բանից ավելի լավ չի կարողանում հարմար ժամանակ գաղտագողի մստենալու բռնելմեկի վոտից, մտնել սառցատունը, կամ գողանալ գյուղացու հավը: Արդեն քանի անգամ ջարդել եյին նրա յետեկի վոտքերը, մի յերկու անգամ կախել եյին նրան, ամեն շաբաթ ծեծում, կիսամեռ եյին անում, բայց նա միշտ կենդանանում եր:

Հիմա, յերեկի, պապը կանգնած ե դարպասի մոտ, աչքերը կկոցած նայում ե գյուղական յեկեղեցու վառ կարմիր լուսամտաներին և, թփի փացնելով թաղյակները, զվարճախոսում ե ծառայող աղամարդ կանց և կանանց հետ: Նրա թակիչը կապված ե գոտուց՝ նա ձեռքերը խփում ե իրար, կուչ ե գալիս ցըտից և, ծերավարի հոհուալով, կճմի՛տում ե մերթ աղախնին, մերթ խոհարարուհուն:

— Մի քթախոտ չքաշե՞նք, — ասում ե նա, դեմ անելով կանանց իր քթախոտի ամանը:

Կանայք քաշում են ու փոշում: Պապն աննկարագրելի հրճվանքի մեջ ե ընկնում, ծիծաղում ե ուրախ ծիծաղով ու բղավում:

— Պոկի՞ր, սառել, կպել ե:

Շներին ել են քթախոտ տալիս քաշելու: Կաշտանկան փոշում ե, վոլորում զունչը և, վիրավորված, քաշվում ե մի կողմ: Իսկ Վյու-

նը ծանրախոհությունից չի փոշառում և պոչն ե թափ տալիս: Իսկ յեղանակը հիանալի յե: Ոգը հանգիստ ե, թափանցիկ ու թարմ: Գիշերը մութ ե, բայց յերեսում ե ամբողջ գյուղն իր սպիտակ տներով և ծխնելույզներից դուրս յեկող ծխով, յեղյամով արծաթազոծված ծառերը, ձյունի հյուսերը:

Ամբողջ յերկինքը ծածկված ե ուրախ թարթող աստղերով, և Հարդգողի ճանապարհը յերեսում ե այնքան պարզ, կարծես այն լվացել են ու ձնով տրորել տոնի համար...

Վանկան հոգոց հանեց, թաթախեց գրիչը թանաքի մեջ և շարունակեց գրել:

«Իսկ յերեկ ինձ մի լավ դրին: Վարպետը մազերցու հաւ սկեց ինձ բակն ու լավ ուսացրեց ղայիշով՝ նրա համար, վոր յես նրանց յերեխին որորում եյի ու ել չիմացա, թե վոնց բնել ելի: Իսկ ես շաքրին աղջիկ-պարուն ինձ ձուկը սկեց. վոր սաքրեմ, յես պօչից սկսեցի մաերել, նա ել վեցցրեց ձուկն ու են ձիան գունչը դեմ արագ իւ մաքին: Աչկերտերը ձեռ են առնում ինձ, ուղարկամ են գինետուն, վոր արադ առնեմ յեվ սիփում են գողանալ տիրոջ վարունգները, եկու ել ծեծում ե սրի ուզածին պես: Իսկ ուտելու բան ել չիա: Առափոք Տալիս են մի ժիշ հաց, նաշին քառովից բանից յեզ յերեկոյան ել ելի հաց, իսկ թեյ կամ թե կերակուր, իրենք Տանիերեն են խժում: Ինձ ել սիփում են, վոր պիտի հաւսում բնեմ, նենց վոր նրանց յերեխեն ել լաց լինի, ել իսկի չեմ բնում, յես եմ որորոցն որորում: Սիրելի պապիկ, են ասծու սերին, առ ինձ եսեղից զյուղ, ել իսկի նար ու հնար չունեմ.. Կարուով բարեզս ենք, վո-

էիդ նողն ըլնեմ յեզ սինչի մահս կաղոթեմ առտծուն, սար
ինձ եստեղից, թե չե կմեռնեմ ..»:

Վանկան ծումուեց բերանը, տրորեց աչ- քերն իր սև բոռունցքով ու հեծկլտաց:

«Յես ֆեզ համար քուրուն կտրուեմ, — շարունակեց
նա, — ասծուն կաղոթեմ, իսկ թե վոր մի բան յեղափ,
դիմուիր ինձ, վոնց վոր կուզես: Թե վոր կարծում ես, թե
ինձ գործ չկա, յես ել քրիստոսի սերին խնդիրք կանեմ
զործակատաներին, վոր կուրիկ սրբեմ կամ թե Ֆեղկայի
տեղ կգնամ նովզի ոզնական կինեմ: Պապիկ ջան, ել
հաւ-հնար չկա, մասն ե խսկական: Ուզեցի վոր վոտով
փախչեմ գուրդը, են ել կուրիկ չկա, ցրից եմ վախենում:
Իսկ վոր մեծացա, ես բանի համար ֆեզ կկերակրեմ ու
չեմ քողնի վոր մեկը ֆեզ դիպնի, թե վոր մեռար ել, հո-
գուկ հանգստության համար աղօք կանեմ, վոնց վոր իմ
Պելագե ազու համար:

«Եսկ Մոսկվան մեծ բաղամք ե: Տերը դիմի աղանե-
րինն են: Զիեր ել շատ կան, վոչխար ել չունեն, իսկ ըր-
ները շատ են: Եստեղ յերեխսերը աստղով ման չեն զալիս, ժա-
մումն ել չեն քողնում մարդ յերգի, մի հետ ել յես տեսա
խանութում, լուսամուտին դրած կարքեր են ծախում կար-
քարելն ել վրան, ամեն տեսակի ձկան համար, շատ ել
լավն են, ենպես սի հատ ել կարք կա, վոր սի փրանց
լոխ կբաշի: Յեվ ենպես ել խանութներ եմ տեսել, վոր-
տեղ ամեն տեսակի հրացաններ կան, վոնց վոր մեր տղան
ունի, ենպես վոր մեկը հարյուր մաներ ել կարծենա...
Իսկ մսի խանութներում ե՛լ ցախակլոր, ե՛լ կախափ, ե՛լ
նապաստակ, իսկ վորտեղ են դրանց խփում, եղ մասին
ենտեղ նսողները բան չեն ասոււ:

«Պապի ջան, իսկ յերբ աղաների տանը տնածառ ըլ-
նի նվերներով, վերցրու ինձ համար մի վոսկեցրած ընկույզ
ու իս կանաչ սնդուկի մեջը ոհր: Ուզիր ուհորդ Ոլգա
Խզնատեվնայից, ասա, Վանկայի համար ե».



Վարպետը լավ ուտացըց ինձ զայիշով:

Վանկան ջղաձգորեն ախ քաշեց ու նորից աչքերը հառեց լուսամուտին։ Նա հիշեց, վոր աղաների համար միշտ պապն երգնում անտառ տոնածառ բերելու և իր հետ տանում եր իր թոռանը։ Ինչ մի ուրախ ժամանակ եր։ Պապն ել եր ճքճքում, սառնամանիքն ել եր ճքճքում, և, նրանց աչք աալով, Վանկան ել եր ճքճքում։ Պատահում եր, վոր նախ քան տոնածառը կտրելը, պապը ծխում ե ծխամորճը, յերկար քաշում ե քթախոտը, ու ծիծաղում մրսած Վանյուշայի վրա... Յեղյամով պատած յերիտասարդ յեղենիները կանգնած են անշարժ և սպասում, թե նրանցից վորը պիտի մեռնի։ Վորտեղից վո՞ր ե, ձյունի վրայով նետի պես թոշում ե նապաստակը... Զի՞ լինի, վոր պապը չկանչի՝

— Բոնիր, բոնիր... բոնիր։ Այ, դու պաշտ սատանա։

Կտրած տոնածառը պապը քաշ եր տալիս աղայի տունը, իսկ ենտեղ սկսում եյին զարդարել ծառը... Ամենից շատ չարչարվում եր որիորդը — Ոլգա Իգնատենան, Վանկայի սիրելին։ Յերբ գեռ կենդանի յեր Վանկայի մայրը Պելագեն և ծառայում եր աղաների մոտ իբրև աղախին, Ոլգա Իգնատենան կե-



Պապն եր գնում անտառ տոնածառ բերելու և իր հետ տանում եր իր թոռանը։

բակրում եր նրան շաքարեղենով և պարապ
ժամանակը սովորեցրեց նրան կարգալ, զրել
հաշվել մինչև հարյուրը և նույնիսկ կարգին
պարել։ Յերբ Պելագեն մեռավ, վորբ Վան-
կային տարան ծառաների խոհանոցը՝ պապի
մոտ, իսկ խոհանոցից Մոսկվա, կոշկակար
Ալյախինի մոտ։

«Արի եսեղ, պապի ջան, — շարունակեց Վայն-
կան, — Քրիստոփ սերին աղաջում եմ, սար ինձ եսեղից։
Խղճա դու ինձ, թշվառ վորբիս, թե չե ինձ բոլորը դրեն-
տում են, ենակես ել ոտել եմ ուզում, ենակես ել ձանձրալի
յե եսեղ, ել ասելու չի, միշտ լաց եմ բլնում։ Են որն ել
վարպետը կաղապառվ զլսիս խփեց, ենակես, վոր վեր
ընկա ու հազիվ խելս զլուխս յեկագ։ Իմ կյանքը հո
կյանք չի, շնից ել վաս եմ... Մեկ ել վոր բարեվում եմ
Ալյոնային, բոռ Յեզորկոյին յեվ կառապանին, համ ել
իմ գարմոնը մարդու չտա։ Մնամ բոռ՝ բոռ՝ իվան Ժո-
կով. պապի ջան, արի»։

Վանկան չորս տակ ծալեց գրված թուղթը
և դրեց ծրարի մեջ, վոր յերեկ եր առել
մի կոպեկով... Մի վորբ մտածելով, նա թա-
թախեց գլիչն ու զրեց հասցեն՝

ԴԵՊԻ ԳՅՈՒՂ ՊԱՊԻՆ

Հետո քորեց իրեն, միտք արեց ու ավե-
լացրեց՝ «Կոնստանտին Մակարիչին»։ Գոհ
նրանով, վոր նրան շխանգարեցին զրել, նա
դրեց գղակը և, չգցելով վրան իր քուր-



Վանկան կոխեց թանկագին նամակը ձեղքի մեջ։

քիկը, ուղղակի շապկանց դուրս վազեց
փողոց...

Մսի խանութի վաճառողները, վորոնց
նա հարցրել եր նախընթաց որը, ասել եյին
նրան, վոր նամակները գցում են փոստի
արկղները, իսկ արկղներից ցրվում են ամ-
բողջ աշխարհը փոստային կառքերով, վորոնք
քշում են հարբած կառապանները և վորոնք
ունեն զրնգան զանգակներ։ Վանկան վազե-
վագ մոտեցավ առաջին փոստարկին և կո-
խեց թանկագին նամակը ճեղքի մեջ...

Քաղցը հույսերով տարված, նա մի ժամ
հետո պինդ քնած եր... Նա յերազում տեսավ
վառարան։ Վառարանի վրա նստած ե պապը,
բորիկ վտաքերը կախած ներքե, և կարդում
ե նամակը խոհարարուհիներին... Վառարանի
մոտ ման ե զալիս վշտնն ու խաղացնում
պոչը...



4580

172

4580 60 чот.

А.П. ЧЕХОВ
ВАНЬКА
ГИЗ ССА ЕРЕВАН

